ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՄԿ-23/4

ք. Երևան « 29 » հունիս 2023թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ն, ի դեմս Ակադեմիայի ռեկտոր Ս. Առաքելյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **մասնագետների պարտադիր վերապատրաստման և հատուկ ուսուցման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Ծառայությունները մատուցվում են «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքին, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատված ուսուցման ծրագրերին և այլ վերաբերելի իրավական ակտերին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Պատվիրատուից ողջամիտ ժամկետում ստանալ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (ղեկավար կազմի և քննիչների) ցուցակները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Ժամանակին տրամադրել ղեկավար կազմի և քննիչների (այսուհետ՝ Ունկնդիրներ) ցուցակները,

2.2.4. Կատարել «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Պատվիրատուից ողջամիտ ժամկետում ստանալ Ունկնդիրների ցուցակները,

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Ժամանակին և պատշաճ կարգով կազմակերպել և անցկացնել Ունկնդիրների համապատասխանաբար՝ վերապատրաստման ծառայությունները,

2.4.5 Կազմել ու «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, հաստատման ներկայացնել Ունկնդիրների ուսուցման գործընթացը կանոնակարգող անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերը,

2.4.6 Պատվիրատուի պահանջով տրամադրել Ունկնդիրների ուսուցմանը վերաբերող անհրաժեշտ տեղեկություններ,

2.4.7 Պատվիրատուի պահանջով վերացնել հայտնաբերված թերությունները,

2.4.8 Յուրաքանչյուր վերապատրաստման ուսուցման ծրագրի ավարտից հետո ներկայացնել ամփոփ տեղեկանք Ունկնդիրների վերապատրաստման արդյունքների վերաբերյալ,

2.4.9 Կատարել «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **9 227 059 (ինը միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար հիսունինը)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 1.1, N 2, 2.1 N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՎՀ 00129631
էլ.հասցեն՝ accountant@justiceacademy.am
Հեռ. 060 46 00 94
Ռեկտոր Ա.Ադամյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«29» հունիսի 2023թ. կնքված
***ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՄՎ-23/4** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը
1	80521100/1	ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	դրամ	9 227 059	1	2023թ. հուլիսի 1-ից մինչև.2023թ. դեկտեմբերի 10-ը ներառյալ

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՎՀ 00129631
էլ.հասցեն՝ accountant@justiceacademy.am
Հեռ. 060 46 00 94
Ռեկտոր Մ.Սարգսյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1.1
«29» հունիսի 2023թ. կնքված
ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՄՎ-23/4 ծածկագրով պայմանագրի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ (ՔՆՆԻՉՆԵՐԻ) ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) 2023 թվականի վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական ծրագրի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 13.04.2022 թվականի N 63-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է քննիչների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը հետևյալ ոլորտներում. քրեական իրավունք, քրեական դատավարության, քրեագիտության արդի հիմնահարցերը, փորձագիտական գործունեության և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունների, Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի, զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրների, կիբեռհանցագործությունների որակման ու քննության առանձնահատկությունների, քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերի, կոռուպցիոն դեպքերի քննության, կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների, երեխայի նկատմամբ բռնության քննության առանձնահատկությունների, հարցաքննության մեթոդների և հաղորդակցության կառավարման, փողերի լվացման հանցակազմի քննության առանձնահատկություններ:

4. Վերապատրաստման ժամաքանակը ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների[1] համար սահմանվում է 24 ակադեմիական ժամ, ուսումնառության ժամկետի տևողությունը՝ 3 օր:

5. Կոմիտեի քննիչների համար վերապատրաստման ժամաքանակը՝ 30 ակադեմիական ժամ, ուսումնառության ժամկետի տևողությունը՝ 4 օր:

6. Վերապատրաստումն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով: Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ընտրությունը քննիչների կողմից կատարվում է ըստ Հավելված 1.1-ում ներկայացված փաթեթների:

7. Վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2023 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IC-003-23	ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում	8
2.	IC-004-23	Քրեաիրավական և քրեադատավարական ոլորտի Վճռաբեկ դատարանի նախադեպային և Սահմանադրական դատարանի որոշումների կիրառման արդի հարցերը	6
3.	IC-005-23	Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները	4
4.	IC-006-23	Խափանման միջոցների տեսակների հիմնահարցերը. կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները	6
5.	IC-007-23	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	6

[1] ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի, զինվորական քննչական գլխավոր վարչության, Երևան քաղաքի քննչական վարչության, մարզային քննչական վարչությունների ստորաբաժանումների (վարչությունների և բաժինների) պետեր և տեղակալներ:

6.	IC-008-23	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերը	6
7.	IC-009-23	Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնա-հատկությունները	4
8.	IC-010-23	Համագործակցության վարույթի առանձնահատկությունները	4

2. ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստման դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IC-007-23	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	2
2.	IC-010-23	Համագործակցության վարույթի առանձնահատկությունները	4
3.	IC-011-23	Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները	4
4.	IC-012-23	Կիբեռհանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկությունները	6
5.	IC-008-23	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերը	6
6.	IC-013-23	Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները	4
7.	IC-014-23	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը ու դրա դեմ պայքարը	4
8.	IC-005-23	Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները	4
9.	IC-015-23	Ներքին ուսումնասիրություններ (քննություն)	2
10.	IC-006-23	Խափանման միջոցների տեսակների հիմնահարցերը. կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները	4
11.	IC-016-23	Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը	2
12.	IC-017-23	Անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	2
13.	IC-018-23	Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմնախնդիրները, նախաքննության և օպերատիվ- հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համագործակցությունը	4
14.	IC-019-23	Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը	4
15.	IC-020-23	Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները	2
16.	IC-021-23	Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում	2
17.	IC-022-23	Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը	2
18.	IC-023-23	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	4
19.	IC-024-23	Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը	2
20.	IC-025-23	Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան	4

21.	IC-026-23	Թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	4
22.	IC-027-23	Հանցագործությունների քննության մեթոդիկայի ընդհանուր դրույթները. կյանքի դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկություններ	6
23.	IC-028-23	Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման հիմնահարցերը և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	4
24.	IC-029-23	Առանձին հանցագործություններով (սպանություն, հափշտակություն, խուլիգանություն և այլն) դեպքի վայրի զննության առանձնահատկությունները	6
25.	IC-030-23	Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, այդ թվում՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման որակման հիմնախնդիրները, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերը, արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերը	4
26.	IC-003-23	ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում	4
27.	IC-009-23	Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները	4
28.	IC-031-23	Անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու հիմնահարցերը	2
29.	IC-032-23	Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովումը քրեական դատավարությունում	4
30.	IC-033-23	Դատախազի որոշումների և ցուցումների բողոքարկման հիմնախնդիրները	2
31.	IC-034-23	Օտարերկրյա պետություններին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կազմման առանձնահատկությունները	2
32.	IC-035-23	Փողերի լվացման հանցակազմի քննության առանձնահատկությունները	2

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. *ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ՀԲԱՂԵՑՆՈՂ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ*

1.IC-003-23. ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում

Դասընթացը պայմանավորված է ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի մի շարք դրույթների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի մի շարք դրույթների առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

2. IC-004-23. Քրեահրավական և քրեադատավարական ոլորտի Վճռաբեկ դատարանի նախադեպային և Սահմանադրական դատարանի որոշումների կիրառման արդի հարցերը

Դասընթացն անդրադառնում է քրեահրավական և քրեադատավարության ոլորտում ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների կողմից կայացված որոշումների քննարկմանն ու ներկայացմանը:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների 2017-2022թթ. որոշումները:

3. IC-005-23. Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները

Դասընթացն ուղղված է մեղադրյալի բացակայությամբ վարույթ իրականացնելու հիմքերին և պայմաններին առնչվող հարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, այս բնագավառում գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու կատարելագործմանը:

Դասընթացը ընդհանուր գիտելիքներ կապահովի մեղադրյալի բացակայությամբ իրականացվող նախաքննության, նախաքննության ընթացքում հեռակա վարույթի դադարեցման, մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին միջնորդության, մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին միջնորդության լուծման, մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով իրականացվող դատական քննության և դատավճիռ կայացնելու կարգի, դատական քննության արդյունքով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման առանձնահատկությունների և հեռակա կարգով դատական քննության արդյունքով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտն ի կատար ածելու առանձնահատկությունների վերաբերյալ:

4. IC-006-23. Խափանման միջոցների տեսակների հիմնահարցերը. Կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները

Դասընթացն անհրաժեշտ է խափանման միջոցների տեսակների, կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու դեպքերի վերաբերյալ ազգային և միջազգային փորձի ուսումնասիրության, այս ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, գործնական խնդիրների վերհանման և փորձի փոխանակման համար:

Դասընթացի շրջանակում ուսումնասիրման առարկա կդառնան ազատության սահմանափակման հիմքերը, ազատությունից զրկված անձանց համար նախատեսված երաշխիքները, այլընտրանքային խափանման միջոցները, կներկայացվեն կալանքի օրինականության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

5. IC-007-23. Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները

Դասընթացը պայմանավորված է փորձագիտական գործունեության և փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փորձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատական փորձաքննության տեսական-իրավական հիմնախնդիրները, փորձագիտական գործունեությունը և դրա առանձնահատկությունները, քրեական վարույթում փորձաքննությունների (դատական հետքաբանություն, պայթյունատեխնիկական, դատաբժշկական, դատահոգեբանական, դատահոգեբուժական, նյութագիտական, դատաձեռագրաբանական, դատաձգաբանական, դատահամակարգչատեխնիկական և այլ) ժամանակակից հնարավորությունները, դրանց նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, փորձաքննությունների կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

6. IC-008-23. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվենցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ կյանքի իրավունքի, խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրների, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը, ինչպես նաև վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները և քննչական պրակտիկայում դրանց կիրառման հմտությունները:

7. IC-009-23. Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունների հարցում գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

8. IC-010-23. Համագործակցության վարույթի առանձնահատկությունները

Դասընթացն ուղղված է համագործակցության վարույթի նպատակներին և կիրառելման հիմքերին, համագործակցության միջնորդություն ներկայացնելու կարգին, միջնորդության լուծմանը, ինչպես նաև համագործակցության համաձայնագիր կազմելու կարգին:

Դասընթացն ընդհանուր գիտելիքներ կապահովի նաև համագործակցության վարույթով իրականացվող նախաքննության ընդհանուր կարգի և համագործակցությունից հրաժարվելու ընթացակարգի վերաբերյալ: Կներկայացվեն նաև համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդության, դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու հիմքի և պայմանների ընհանուր ընթացակարգերը:

2. ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ

1. IC-007-23. Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները

Դասընթացը պայմանավորված է փորձագիտական գործունեության և փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փորձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատական փորձաքննության տեսական-իրավական հիմնախնդիրները, փորձագիտական գործունեությունը և դրա առանձնահատկությունները, քրեական վարույթում փորձաքննությունների (դատական հետքաբանություն, պայթյունատեխնիկական, դատաբժշկական, դատահոգեբանական, դատահոգեբուժական, նյութագիտական, դատաձեռագրաբանական, դատաձգաբանական, դատահամակարգչատեխնիկական և այլ) ժամանակակից հնարավորությունները, դրանց նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, փորձաքննությունների կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

2. IC-010-23. Համագործակցության վարույթի առանձնահատկությունները

Դասընթացն ուղղված է համագործակցության վարույթի նպատակներին և կիրառելման հիմքերին, համագործակցության միջնորդություն ներկայացնելու կարգին, միջնորդության լուծմանը, ինչպես նաև համագործակցության համաձայնագիր կազմելու կարգին:

Դասընթացն ընդհանուր գիտելիքներ կապահովի նաև համագործակցության վարույթով իրականացվող նախաքննության ընդհանուր կարգի և համագործակցությունից հրաժարվելու ընթացակարգի վերաբերյալ: Կներկայացվեն նաև համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդության, դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու հիմքի և պայմանների ընհանուր ընթացակարգերը:

3. IC-011-23. Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները

Դասընթացն անհրաժեշտ է զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ կիրառման, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է զինվորական հանցագործություններ նախատեսող հանցակազմերի մանրամասն ներկայացումը՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի համաձայն, զինվորական կարգապահության խախտումների և զինվորական հանցագործությունների տարանջատման հարցերը, մասնավորապես՝ նույն արարքի համար կրկին պատասխանատվության չենթարկվելու սկզբունքի տեսանկյունից, զինվորական հանցագործությունների ընդհանուր և որակյալ հանցակազմերի որակման առանձնահատկությունները:

4. IC-012-23. Կիբեռհանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, դրանց քննության մեթոդաբանության առանձին հարցերի կապակցությամբ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է «Կիբեռհանցագործությունների մասին» ԵԽ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում, Կոնվենցիայի հիման վրա ստեղծված կոմիտեի (T-CY)՝ արարքների որակման հետ կապված բանաձևերը, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների որակման հիմնախնդիրները, մանկական պոռնոգրաֆիկ նյութերի հետ կապված քրեական գործերով ապացույցների ձեռքբերման հնարավոր տարբերակները, «տոր» կամ «մութ» ցանցերից ապացույցներ ձեռքբերելու դժվարությունները, նման հանցագործությունների լատենտայնությունը, կիբեռհանցագործություններով միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

5. IC-008-23. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ կյանքի իրավունքի, խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրների, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը, ինչպես նաև վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները և քննչական պրակտիկայում դրանց կիրառման հմտությունները:

6. IC-013-23. Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման օրենսդրական պահանջների, միջազգային չափանիշների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը, որակման առանձնահատկությունները, հարակից հանցակազմերից սահմանազատելու հիմնահարցերը, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները, ինչպես նաև դրա կանխարգելման, արձանագրման և արդյունավետ բացահայտման Ստամբուլի արձանագրության չափանիշներին համապատասխան խոշտանգումների ու վատ վերաբերմունքի հետքերի փաստագրման վերաբերյալ հարցերը, խոշտանգումների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան:

7. IC-014-23. Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը ու դրա դեմ պայքարը

Դասընթացն ուղղված է արդարադատության ողջ շղթայում սեռի հիմքով բռնության դեմ պայքարին առնչվող հարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, այս բնագավառում գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու կատարելագործմանը:

Դասընթացը ընդհանուր գիտելիքներ կապահովի կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերի և սեռի հիմքով բռնության, Հայաստանում դրա տարածվածության և բռնության նկատմամբ վերաբերմունքին վերաբերող հիմնահարցերի մասին, ինչպես նաև ընդհանուր պատկերացում կտա համապատասխան միջազգային գործիքակազմի և կիրառելի ստանդարտների վերաբերյալ: Դասընթացի շրջանակում անդրադարձ կկատարվի զոհի անվտանգությունն ապահովելու նպատակով անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների իրականացմանը, ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հաշտարարության գործերում առկա հիմնահարցերին, միջգերատեսչական համագործակցության ստանդարտներին, քրեական վարույթի առանձնահատկություններին՝ գործի քննությունից մինչև դատավճռի կայացման փուլն ընկած ողջ ժամանակահատվածում:

8. IC-005-23. Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները

Դասընթացն ուղղված է մեղադրյալի բացակայությամբ վարույթ իրականացնելու հիմքերին և պայմաններին առնչվող հարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, այս բնագավառում գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու կատարելագործմանը:

Դասընթացը ընդհանուր գիտելիքներ կապահովի մեղադրյալի բացակայությամբ իրականացվող նախաքննության, նախաքննության ընթացքում հեռակա վարույթի դադարեցում, մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու մասին միջնորդության, մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով դատական քննություն

իրականացնելու մասին միջնորդության լուծման, մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով իրականացվող դատական քննության և դատավճիռ կայացնելու կարգի, դատական քննության արդյունքով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման առանձնահատկությունների և հեռակա կարգով դատական քննության արդյունքով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտն ի կատար ածելու առանձնահատկությունների վերաբերյալ:

9.IC-015-23. Ներքին ուսումնասիրություններ (քննություն)

Դասընթացն անհրաժեշտ է աշխատավայրում ծառայողական քննությունների անցկացման, ներքին աուդիտի ուսումնասիրությունների, ազդարարների պաշտպանության, արտաքին հետաքննություն իրականացնողներին իրազեկման ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, վերջիններիս կիրառման գործնական հմտությունների զարգացման համար:

Այս դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն պետական կառավարման մարմիններում ծառայողական քննության ընթացակարգը և պատասխանատվությունը, ներքին աուդիտի դերը և գործառույթները, պետության ֆինանսական վերահսկողության գործառույթը և դրա իրականացման ընթացակարգն ու հաշվետվողականությունը, ազդարարումը և սուտ մատնությունը, ինչպես նաև ազդարարման արտոնությունից օգտվելու չարաշահումները, տարբերությունները և հնարավոր համընկնումները, իրավապահ մարմիններին իրազեկելու պատասխանատվություն ունեցող իրավասու անձանց նույնականացումը և այլ հիմնահարցեր:

10. IC-006-23. Խափանման միջոցների տեսակների հիմնահարցերը. Կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները

Դասընթացն անհրաժեշտ է խափանման միջոցների տեսակների, կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու դեպքերի վերաբերյալ ազգային և միջազգային փորձի ուսումնասիրության, այս ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, գործնական խնդիրների վերհանման և փորձի փոխանակման համար:

Դասընթացի շրջանակում ուսումնասիրման առարկա կդառնան ազատության սահմանափակման հիմքերը, ազատությունից զրկված անձանց համար նախատեսված երաշխիքները, այլընտրանքային խափանման միջոցները, կներկայացվեն կալանքի օրինականության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

11. IC-016-23. Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը

Դասընթացն ուղղված է գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քրեականացման մարտահրավերների և առկա բացերի, թերությունների, նշված հանցագործությունների հանդեպ հանդուրժողականության պատճառների և առկա իրավիճակը հաղթահարելու հնարավոր ուղիների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների կատարելագործման, փորձի փոխանակման համար:

Դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն ՀՀ քրեական օրենսդրությամբ սեքսուալ հետապնդման և սեքսուալ չարաշահումների (շահագործման) համար քրեական պատասխանատվությունը՝ որպես գենդերային հանցագործություններից պաշտպանության տարատեսակ, այս հանցագործության քննության մեթոդիկայի, քննության տակտիկայի, քրեական հետապնդման առանձնահատկությունները:

12. IC-017-23. Անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը

Դասընթացն անհրաժեշտ է անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանության ոլորտում գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև իրավական նոր դիրքորոշումները Ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան, մասնավորապես, հետևյալ ասպեկտներով.

- Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները,
- Անչափահասների և փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթի սկզբունքային առանձնահատկությունները, ներպետական օրենսդրական կարգավորումները և միջազգային փորձը,
- Անչափահասների և փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկությունները,
- Ապացուցման գործընթացի առանձնահատկությունները,
- Անչափահաս և փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների մասնակցությունը քննչական և դատավարական գործընթացին,
- Օրինական ներկայացուցչի և պաշտպանի մասնակցությունը անչափահաս և փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթին:

13. IC-018-23. Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմնախնդիրները, նախաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համագործակցությունը

Դասընթացն անհրաժեշտ է օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտում նախաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համագործակցության վերաբերյալ գիտելիքների և գործնական հմտությունների կատարելագործման և ընդլայնման համար:

14. IC-019-23. Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը

Դասընթացն անհրաժեշտ է մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության և դրանց դեմ պայքարի ոլորտում արդի խնդիրները քննության առարկա դարձնելու, այս բնագավառում գիտելիքների ծավալն ընդլայնելու, գործնական հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տիպերը, բնութագրերը, պատճառները, հետևանքները, մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկությունները:

15. IC-020-23. Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է երեխաների նկատմամբ բռնությունների դեմ պայքարում, այդ բռնությունների որակման, դրանց առնչությամբ վարույթի և քննության վերաբերյալ գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ՀՀ քննչական և դատական պրակտիկայում առկա խնդիրները վերհանելու, ինչպես նաև իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան, մասնավորապես, հետևյալ ասպեկտներով՝

- Երեխաների նկատմամբ բռնության հասկացությունը, տեսակները, հանցավոր դրսևորումների քրեաիրավական բնութագիրը,
- Երեխաների նկատմամբ բռնության հոգեբանական հետևանքները և հակազդման առանձնահատկությունները,
- Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի քննության առանձնահատկությունները քննության սկզբնական և հետագա փուլերում (քննության մեթոդիկան ու տակտիկան),
- Քրեական դատավարությունում բռնության ենթարկված երեխաների իրավունքների ապահովումը,
- Օրինական ներկայացուցչի, մանկավարժի և մասնագետի (հոգեբանի) մասնակցությունը քրեական գործով վարույթին՝ որպես երեխայի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիք,
- Երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները դատական քննության փուլում,
- Բռնության ենթարկված երեխաների հարցաքննության առանձնահատկությունները,
- Երեխայի նկատմամբ բռնության դեպքերի քննության ընթացքում միջոլորտային և միջգերատեսչական համագործակցությունն ու դրա ձևերը:

16. IC-021-23. Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում

Դասընթացը պայմանավորված է քրեական դատավարությունում զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունների, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու ապահովման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Քրեական դատավարության զոհի իրավական կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները,
- Զոհերի համար ընթացակարգային երաշխիքները,
- Զոհերի պաշտպանությունը և նրանց աջակցության տրամադրումը (երկրորդային վիկտիմիզացման կանխարգելում, պաշտպանություն ապաբեկումից, վրեժխնդրությունից, դատի ընթացքում վնասվելուց և այլն),
- Զոհերի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի ապահովումը,
- Զոհերին փոխհատուցումը,
- Զոհերի քաղաքացիական հայցի ապահովումը քրեական դատավարությունում,
- Ընթացակարգային հարմարությունները խոցելի զոհերի համար (խոցելի զոհերի բացահայտում, երեխաներ, փոքրամասնություններ, հաշմանդամություն ունեցող զոհեր, սեռական հանցագործությունների զոհեր, մարդկանց թրաֆիքինգի զոհեր և այլն):

17. IC-022-23. Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը

Դասընթացը պայմանավորված է հարցաքննության մեթոդների և հաղորդակցության կառավարման վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման, ինչպես նաև տեսական գիտելիքները գործնակում կիրառելու հմտությունների զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Հաղորդակցության ընդհանուր տեսանկյունները (թե՛ խոսքային և թե՛ ոչ խոսքային, բանավոր և գրավոր, լսող կողմի ընկալմանը նպաստող մեթոդներ, արդյունավետ ունկնդրում),
- Հաղորդակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ,
- Հաղորդակցությունը վկաների հետ,
- Հաղորդակցությունը զոհերի հետ,
- Հաղորդակցությունը մեղադրյալի հետ,
- Հաղորդակցությունը փաստաբանների և դատավարության մյուս մասնակիցների հետ,
- Հաղորդակցությունը անչափահասների հետ (ինչպես հարցեր տալ, ինչպես ստանալ արժանահավատ տեղեկություններ և այլն),
- Հաղորդակցությունը փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ,
- Միջմշակութային հաղորդակցություն:

18. IC-023-23. Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում

Դասընթացն անհրաժեշտ է ցանկացած տեսակի, այդ թվում՝ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության ընթացքում էլեկտրոնային ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման ու կիրառման համալիր հարցերի կապակցությամբ գիտելիքներ հաղորդելու և ապացուցման գործընթացում դրանց տակտիկապես գրագետ կիրառման հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է «Կիբեռհանցագործությունների մասին» ԵՄ Կոնվենցիայով նախատեսված քրեական հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացիայի խնդիրները ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացուցման գործընթացի հիմնախնդիրները, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները, խնդրո առարկա բնագավառի վերաբերյալ ՄԻԵԴ, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն ոլորտում միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

19. IC-024-23. Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը

Դասընթացը պայմանավորված է զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննության ոլորտում քրեագիտական գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

– Վատ վերաբերմունքի վերաբերյալ իրականացվող արդյունավետ քննության էությունը,

– Մարդու իրավունքների՝ վատ վերաբերմունքին վերաբերող եվրոպական չափանիշները, այդ համատեքստում արդյունավետ քննությունը,

– Զինված ուժերի համատեքստում վատ վերաբերմունքի վերաբերյալ արդյունավետ քննություն կատարելու միջազգային լավագույն փորձը,

– Մարդու իրավունքների՝ վատ վերաբերմունքին վերաբերող եվրոպական չափանիշների վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը:

20. IC-025-23. Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան

Դասընթացն անհրաժեշտ է սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության ոլորտում առկա արդի հիմնախնդիրները ուսումնասիրելու, այս բնագավառում տեսական գիտելիքների ծավալն ընդլայնելու, ինչպես նաև գործնական հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների տեսակները, բնութագրերը, պատճառները, հետևանքները, այդօրինակ հանցագործությունների քննության տակտիկայի և մեթոդիկայի առանձնահատկությունները:

21. IC-026-23. Թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան

Դասընթացն անհրաժեշտ է թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ քրեական գործերի քննության և դրա դեմ պայքարի ոլորտում արդի հիմնախնդիրները ուսումնասիրելու, այս բնագավառում տեսական գիտելիքների ծավալն ընդլայնելու, ինչպես նաև գործնական հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացի շրջանակում կուսումնասիրվեն թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող հանցագործությունների բնութագրերը, պատճառները, հետևանքները, այդ հանցագործությունների առնչությամբ հարուցվող քրեական գործերի քննության առանձնահատկությունները, դրանց ընթացքում կիրառվող տակտիկական հնարքների և մեթոդիկայի յուրահատկությունները:

22. IC-027-23. Հանցագործությունների քննության մեթոդիկայի ընդհանուր դրույթները. Կյանքի դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկություններ

Դասընթացը պայմանավորված է հանցագործությունների քննության, այդ թվում կյանքի դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկայի հարցում տեսական գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հանցագործությունների քննության մեթոդիկայի վերաբերյալ ընդհանուր դրույթների ուսումնասիրություն, առանձին հանցագործությունների քննության մեթոդիկայի յուրահատկությունների քննարկում, իրավիճակային խնդիրների միջոցով կոնկրետ տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկայի փորձարկում:

23. IC-028-23. Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման հիմնահարցերը և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան

Դասընթացը պայմանավորված է քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի հարցում գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման առանձնահատկությունների, դրանց վերաբերյալ գործերի քննության պլանավորման, պարզաբանման և ապացուցման ենթակա հանգամանքների վերհանման, քննության սկզբնական և հետագա փուլերի, ինչպես նաև առանձին քննչական գործողությունների կատարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

24. IC-029-23. Առանձին հանցագործություններով (սպանություն, հափշտակություն, խուլիգանություն և այլն) դեպքի վայրի զննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է առանձին հանցագործություններով (սպանություն, հափշտակություն, խուլիգանություն և այլն) դեպքի վայրի զննության առանձնահատկությունների հարցում գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է առանձին հանցագործություններով (սպանություն, հափշտակություն, խուլիգանություն և այլն) դեպքի վայրի զննության առանձնահատկությունների, դրանց կատարման, ապացուցման ենթակա հանգամանքների վերհանման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

25. IC-030-23. Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, այդ թվում՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման որակման հիմնախնդիրները, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և

ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերը, արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերը

Դասընթացը պայմանավորված է հանցագործությունների որակման հիմնախնդիրների, այդ թվում՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման որակման հիմնախնդիրների, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերի, արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հանցագործությունների որակման հիմնախնդիրների, այդ թվում՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման որակման հիմնախնդիրների, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերի, արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

26. IC-003-23. ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում

Դասընթացը պայմանավորված է ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի մի շարք դրույթների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի մի շարք դրույթների առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

27. IC-009-23. Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունների հարցում գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

28. IC-031-23. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու հիմնահարցերը

Դասընթացը պայմանավորված է անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու հիմնահարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

29. IC-032-23. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովումը քրեական դատավարությունում

Դասընթացը պայմանավորված է ՀՀ քրեական դատավարությունում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման հարցում գիտելիքների ծավալի ընդլայնման, գործնական ունակությունների և կարողությունների կիրառման հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարությունում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

30. IC-033-23. Դատախազի որոշումների և ցուցումների բողոքարկման հիմնախնդիրները

Դասընթացը պայմանավորված է դատախազի որոշումների և ցուցումների բողոքարկման հիմնախնդիրների վերաբերյալ անհրաժեշտ հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատախազի որոշումների և ցուցումների բողոքարկման հիմնախնդիրների վերաբերյալ առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

31. IC-034-23. Օտարերկրյա պետություններին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կազմման առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է օտարերկրյա պետություններին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կազմման առանձնահատկությունների հմտության ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է օտարերկրյա պետություններին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կազմման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Դասընթացի շրջանակներում քննիչներին պետք է փոխանցվեն անհրաժեշտ գիտելիքներ՝ պատշաճ կերպով և ժամանակին դիմելու միջազգային համագործակցության շրջանակում իրավական օգնություն ստանալու համար՝ ներպետական մակարդակով քննվող ՔԼ/ԱՓ գործերի մասով, պատշաճ կերպով և ժամանակին դիմելու միջազգային համագործակցության այլ ձևերի շրջանակում օգնություն ստանալու համար՝ ֆինանսական հետախուզության տվյալների և վերահսկողական, իրավապահ կամ այլ բնույթի տեղեկություններ փոխանակելու միջոցով:

32. IC-035-23. Փողերի լվացման հանցակազմի քննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է փողերի լվացման հանցակազմի քննության առանձնահատկություններով, և ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային ռազմավարական իրավական ակտերով փողերի լվացման հանցակազմի քննության նկատմամբ առանձնահատուկ ուշադրությամբ:

Դասընթացը ներառելու է փողերի լվացման քննության առանձնահատկությունների ուսումնասիրումը, այդ թվում՝ քննիչներին պետք է փոխանցվեն անհրաժեշտ հմտություններ՝ իրավաբանական անձանց և կազմավորումների հիմնական հատկորոշիչների ու իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու և փոխանակելու նպատակով պատշաճ կերպով և ժամանակին հարցումներ ներկայացնել և դրանց պատասխանելու համար, արդյունավետ օգտագործել Ֆինանսական հետախուզության տվյալները և այլ վերաբերելի տեղեկությունները, որոնք հասանելի են և օգտագործվում են ՔԼ, նախորդող հանցագործությունների և ԱՓ գործերի նախաքննության ընթացքում ապացույցների հավաքման ու

հանցավոր ճանապարհով ստացած միջոցների հետապնդման նպատակով: Հայտնաբերել պոտենցիալ ՓԼ գործերի և իրականացնել պատշաճ նախաքննություն (այդ թվում՝ զուգահեռ ֆինանսական քննության միջոցով): Քննիչներին իրազեկել ՖԴԿ-ին հարցումներ կատարելու չափանիշների վերաբերյալ:

Հավելված 1.1

ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.
ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների համար

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	IC-003-23	ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում	8
2.	IC-004-23	Քրեաիրավական և քրեադատավարական ոլորտի Վճռաբեկ դատարանի նախադեպային և Սահմանադրական դատարանի որոշումների կիրառման արդի հարցերը	6
3.	IC-005-23	Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները	4
4.	IC-006-23	Խափանման միջոցների տեսակների հիմնահարցերը. կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները	6

Փաթեթ 2.
ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների համար

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	IC-003-23	ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում	8
2.	IC-007-23	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	6
3.	IC-008-23	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերը	6
4.	IC-009-23	Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները	4

ՀՀ քննչական կոմիտեի քննիչների համար
Փաթեթ 1.

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	IC-014-23	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը ու դրա դեմ պայքարը	4
2.	IC-012-23	Կիբեռհանցագործությունների որակումն ու քննության առանձնահատկությունները	6
3.	IC-006-23	Խափանման միջոցների տեսակների հիմնահարցերը. Կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները	4
4.	IC-003-23	ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում	4
5.	IC-005-23	Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթի առանձնահատկությունները	4
6.	IC-030-23	Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, այդ թվում՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման որակման հիմնախնդիրները, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերը, արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնահարցերը	4
7.	IC-021-23	Զոհերի (տուժողների) կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում	2
8.	IC-034-23	Օտարերկրյա պետություններին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կազմման առանձնահատկությունները	2

Փաթեթ 2.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IC-011-23	Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական խնդիրները	4
2.	IC-015-23	Ներքին ուսումնասիրություններ (քննություն)	2
3.	IC-003-23	ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում	4
4.	IC-024-23	Զինված ուժերում խոշտանգումների, վատ վերաբերմունքի և մահվան դեպքերի արդյունավետ քննությունը	2
5.	IC-029-23	Առանձին հանցագործություններով (սպանություն, հափշտակության, խուլիգանություն և այլն) դեպքի վայրի զննության առանձնահատկությունները	6
6.	IC-034-23	Օտարերկրյա պետություններին քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կազմման առանձնահատկությունները	2
7.	IC-027-23	Հանցագործությունների քննության մեթոդիկայի ընդհանուր դրույթները. կյանքի դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկություններ	6
8.	IC-016-23	Գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննությունը	2
9.	IC-031-23	Անձին որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու հիմնահարցերը	2

Փաթեթ 3.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IC-013-23	Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը և քննության ա-ռանձնահատկությունները	4
2.	IC-017-23	Անչափահաս կամ փոքրամասնության խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	2
3.	IC-010-23	Համագործակցության վարույթի առանձնահատկությունները	4
4.	IC-025-23	Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան	4
5.	IC-003-23	ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում	4
6.	IC-009-23	Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները	4
7.	IC-032-23	Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովումը քրեական դատավարությունում	4
8.	IC-033-23	Դատախազի որոշումների և ցուցումների բողոքարկման հիմնախնդիրները	2
9.	IC-018-23	Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմնախնդիրները, նախաքննության և օպերատիվ- հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համագործակցությունը	2

Փաթեթ 4.

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IC-020-23	Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները	2
2.	IC-023-23	Էլեկտրոնային ապացույցների կիրառման հիմնախնդիրները քրեական դատավարությունում	4
3.	IC-026-23	Թմրանյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	4
4.	IC-028-23	Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների որակման հիմնահարցերը և դրանց վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան	4

5.	IC-003-23	ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ներկայացում և քննարկում	4
6.	IC-019-23	Մտավոր սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննությունը և դրանց դեմ պայքարը	4
7.	IC-022-23	Հարցաքննության մեթոդները և հաղորդակցության կառավարումը	2
8.	IC-008-23	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցերը	4
9.	IC-035-23	Փողերի լվացման հանցակազմի քննության առանձնահատկությունները	2

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի
որակավորման հանձնաժողովի
1 հունիսի 2023թ. որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ (ՔՆՆԻՉՆԵՐԻ) ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (այսուհետ՝ քննիչների) հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:

3. Ծրագիրը նպատակաուղղված է քննչների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 10 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	I-S-001-18	Հրազենի գործադման հմտություններ	10

1. I-S-001-18. Հրազենի գործադրման հմտություններ Դասընթացը պայմանավորված է քննիչների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ: Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն)
Կ.Մ.

ԿԱՏԱՐՈՂ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՀ 00129631
էլ.հասցեն՝ accountant@justiceacademy.am
Հեռ. 060 46 00 94
Ռեկտոր՝ Ս.Լուսաբերյան

(ստորագրություն)
Կ.Մ.

Հավելված N 2
«29» հունիսի 2023թ. կնքված
ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՄՎ-23/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	80521100/1	Ուսուցման ծրագրերի հետ կապված ծառայություններ	-	-	-	-	-	-	9 227 059	9 227 059	9 227 059	9 227 059	9 227 059	9 227 059	**9 227 059**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 00129631
էլ.հասցեն՝ accountant@justiceacademy.am
Հեռ. 060 46 00 94
Ռեկտոր՝ Ս. Առաքելյան

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2.1
«29» հունիսի 2023թ. կնքված
ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՄԿ-23/4 ծածկագրով պայմանագրի

ՀԱՇՎԱՐԿ

Անվանում	թվաքանակը	խմբերի թիվը	մեկ խմբին ընկնող ժամերի թիվը	օրերի թիվը	ժամերի թիվը	Ժամավարձ	գրենական և այլ ծախսեր	մարզերից վերապատրաստվողներ	սնունդ	ճանապարհածախս	Ընդհանուր ժամավարձ 12=6x7	Գրենական և այլն ընդամենը 13=2x8	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ղեկավար կազմ	56	3	24	3	72	5 000	2486	14	126 000	70 000	360 000	139 216	695 216
Քննիչներ	184	9	30	4	270	5 000	4500	48	576 000	240 000	1 350 000	828 000	2 994 000
Ընդամենը	240	12			342			62					3 689 216

Հատուկ ուսուցում

Անվանում	թվաքանակը	խմբերի թիվը	մեկ խմբին ընկնող ժամերի թիվ	օրերի թիվը	մեկ ունկնդրի մեկ ժամվա հատուկ ուսուցման արժեքը	Հատուկ ուսուցման արժեքը	ընդամենը
1	2	3	4	5	6	7	8
Քննիչներ	200	5	10	1	2000	4 000 000	4 000 000
Ընդամենը							4 000 000
						ԸՆԴԱՄԵՆԸ	7 689 216
						ԱԱՀ	1 537 843
						ԱՄԲՈՂՋԸ	9 227 059

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263
Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան

ստորագրություն

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 00129631
էլ.հասցե՝ accountant@justiceacademy.am
Հեռ. 060 46 00 94
Ռեկտոր՝ Ս. Առաքելյան

ստորագրություն

Կ.Տ

Հավելված 3
«29» հունիսի 2023թ. կնքված
***ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՄՎ-23/4** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«29» հունիսի 2023թ. կնքված
ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ՄՎ-23/4 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն